

ԱԶԱՏ ԽՕՍՔ

ՀԱՐԱԹ 15 ԴԵԿՏԵՄ. 1906. ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

Ի ՊԷՏՍ ԱՊՍԿՍՅ ՊԱՏՄՈՐԱՆԻՑ

Լեւոն Բաշալեան, ինչպէս նախորդ թիւով ճշգրտօրէն ծանուցած էինք, երեքշաբթի, կէսօրէն ետք, ուստական շոգենաւով մեկնեցաւ Օտեսա, անկէ Պարու վերագառնալու համար:

Լեւոն Բաշալեանի սակաւօրեայ բնակութիւնը Ալեքեանդրիոյ մէջ ճշմարիտ հմայք մը եղաւ այստեղի մտաւորական երիտասարդութեան համար որ գրեթէ մինչև վերջին վայրկեանը շրջապատած էր մեծանուն գրագէտը:

Այդ երիտասարդութիւնը համակրական արտայայտութիւն մը ընելու համար իր սիրելի գրքադէտին, կիրակի, ցերեկէն յետոյ «Փայվ օ Բըլօք թի» մը կազմակերպեց Նիու Խըտիվիալ Օթէլի սրահներէն միոյն մէջ:

Թէյի սեղանին շուրջ, սրուն բնականաբար կը նախագահէր Լեւոն Բաշալեան, բազմած էին Տ. Լեւոն Մկրտիչեան, Տ. Ա. Ռշտունի, Տ. Միհ-

րան Թեւեան, Տ. Միքայէլ Կիւրճեան, Տ. Յ. Ազատէր, Տ. Արտաշէս Նետուրեան, Տ. Ա. Բապուճճեան, Տ. Յ. Փափաղեան, Տ. Կերսէս Նետուրեան և այլն:

Տ. Լ. Մկրտիչեան իրեն յատուկ պերճախօս սրամտութեամբ սրիչ մը արտասանեց, նոյնպէս Միքայէլ Կիւրճեան, մեր այնքա՛ն ծոյլ որքան անխոնջ աշխատակիցը, սիրուն խօսուըռտուըրով մը անգամ մըն ալ իր անսպառ սրամտութեան ապացոյցը տուաւ, իբր թէ այլևս հարկ ըլլար այդպիսի ապացոյցի մը: Ի վերջոյ Լեւոն Բաշալեան պատասխանեց իրեն ուղղուած համակրական ուղերձներուն, քառորդի մը չափ իր խօսքերու հրապոյրովը մեզ կախարդելով:

Կ. Պօլսոյ թերթերը կը ծանուցանեն թէ Կրօնական ժողովը իր նոյեմբեր 20ի նստին մէջ որոշում տուած է լուծել Տ. Լեւոն Շիշմանեանի ամուսնութիւնը ընդ Շահին Գարճեանի:

Համակրելի դերասան և Ալեքսանդրիոյ Թըռավայի ընկերութեան պաշտօնեայ Տ. Լ. Շիշմանեանի բազմաթիւ բարեկամներուն ծանօթ է թէ Տ. Շիշմանեան երկու տարիէ ի վեր ամուսնալուծում պահանջած էր, սակայն այդ տեսակ գործերու սովորական դանդաղութեամբը հաղիւ հիմակ կրցած է գոհացում ստանալ:

Չմտնանք ըսել թէ Կրօնական ժողովը բո-

չորովին արդարացի գտնելով Տ. Շիչմանեանի բողոքները եւ ամբաստանութիւնները իր նախկին կնոջ դէմ, արտօնութիւն ատւած է իրեն կրկին ամուսնանալու, մինչդեռ կինը զրկած է եկեղեցոյ հաղորդակցութենէ և վերամուսնութենէ:

Գոհութեամբ արձանագրելով հանդերձ մեր բարեկամին ի նպաստ տրուած վճիռը, բոլորովին աւելորդ կը գանձնք կնոջ դէմ ցոյց տրուած աններող ոգին, և հակառակ ժամանակակից բարբրուն:

«Ազատ Բեմ»ի Դեկտեմբեր 12ի թիւին ճակատը կը կարդանք հետեւեալ Յայտարարութիւնը:

«Ազատ Բեմի վարչութիւնը ներկայիւս կը ծանուցանէ թէ այսուհետեւ բնաւ չպիտի զիջանի պատասխանել քննադատութեան դիմակին տակ եղած ամէն կարգի վայրահաչութեանց: Այս որոշման հանգամ ենք, ո՛չ միայն աւելորդ վիճաբանութիւններէ խուսաբելու եւ մեր ընթերցողները չձանձրացնելու նպատակաւ, այլ նաև անոր համար որ համոզուած ենք թէ մեր ընդդիմախօսները ձրի զրպարտութիւններ ընելէ զատ ուրիշ որ և է բան չեն գիտեր:»

Այս պաշտօնական զեկոյցէն ետքը, նոյն թիւին երկրորդ երեսին մէջ Ա. Ասլանեան «Ազգավընաս Դամէլիօնին յուսահատ գալարումները»

վերնագրով յօդուածով մը կը պատասխանէ Տ. Մկրտիչ Անդրանիկեանի Լուսաբերի մէկ յաւելուածովը հրատարակած և Ազատ Բեմի խմբակին ուղղուած մէկ խիստ քննադատականին:

Ինչո՞ւ այդ հակասութիւնը մէկ երեսէն միւսը:

Այդ գաղտնիքին բանալին փնտռեցինք Ալեքսանդրիաքնակ Ազատ Բեմեանի մը քով, որ մեզի պատասխանեց.

- Շիտակը որոշ բան մը չեմ կրնար ըսել, միայն թէ սա բացատրութիւնը գոտայ ինքնիրենըս. Յայտարարութիւնը կ'ըսէ որ Ազատ Բեմ չպիտի պատասխանէ «քննադատութեան գիմակին տակ եղած» ամէն կարգի վայրահաչութեանց, ո՛չ ալ «ձրի զրպարտութիւններ»ու. արդ, կ'երեւայ որ Տ. Մկրտիչ Անդրանիկեանի գրածները ո՛չ վայրահաչութիւններ են, ո՛չ ալ ձրի զրպարտութիւններ, այլ բանաւոր և իրաւացի քննադատութիւններ եւ ասոր համար պէտք կը զգայ պատասխանելու:

Ուրիշներ ալ կ'ըսեն թէ այդ Յայտարարութիւնը պարզապէս փախուստի վրան բաց ճամբայ մըն է Ա. Ա.ի ձեռքէն խալսելու համար:

Անցած թիւով ծանուցած էինք թէ տօքթ. Յակոբեան Բորթ-Սայիտ մեկնած է անկէ դէպի Ատէն, Պոմպէյ, Պուշիր, Պարսկաստան և Պաղտատ երթալու համար: Արդ, այժմ կ'իմանանք որ յարգելի տօքթո՞ղը Պոմպէյ քիչ մը ժամանակ մնալէ ետքը Կարկաթա պիտի երթայ ուր պիտի հաստատուի այժմ:

ԹԷՎՖԻՐ ԷՓԷՆՏԻՆ

Էրզրումի Րիֆահիէ գաւառակին՝
Նախադատ ստեանին ընդհանուր
դատախազի օգնական փոխանորդ
Յրդ կարգի քօմիսէր Թէվֆիք էֆ.
գասաստանի ենթարկուեցաւ, կա-
շ ա ո ք կերած ըլլալուն համար
(ՄԱՆԶՈՒՄԷ)

Խեղճ Թէվֆիք էֆէնտի. այսպէս ուրեմն, քու
անո՞ւշ հայրենիքիդ մէջ կաշառակերութեան հա-
մար մարդ կը դատուի եղեր, և այդ մարդն ալ,
ո՞ դժխեմ ճակատագիր, դուն կ'ըլլաս եղեր: Արդ-
եօք ո՞րքան զարմացար երբ՝ ատանկ անմեղյան-
ցանքի մը համար՝ կառավարական թաթը վզիդ
շուրջը զգացիր, դուն որ աչքդ աշխարհի լոյսին
բացած օրէդ՝ բոլորտիքդ ուրիշ բան չէիր տեսած
եթէ ոչ սանձարձակ ու մեծաքանակ յափշտա-
կութիւն, թալան, ոճիր: Կառավարական նուի-
րապետութեան աստիճաններուն վրայ քենէ վեր
ու քենէ վար որջացող սովալլուկ շոլիրին անպա-
տիժ աւազակութեանը, անոր կողմէ անմեղներու
անդադրում կողոպտումին ականատես ու մեղ-
սակից ըլլալէ յետոյ ի՞նչ եղար արդեօք երբ կա-
շառքի շա՛տ անզնաս պարագայի մը առթիւ յան-
կարժ օձիքիդ պլորուիլը տեսար արդարութեան
անունը կրող ձեռքի մը մատուրներուն մէջ: Կ'ե-
րևակայեմ դէմքիդ ծամուծուռ արտայայտու-

Թիւնը, ապշութեան, թերահաւատութեան, չա-
կնկալուած ցափ արտառոց խառնուրդ: Ի՞նչ
պիտի ըսես դատարան ելած օրդ, այն դատա-
ւորներուն առջև: քու երեկի մեծերդ-սրօնց կի-
սաբաց կլափին մէջէն աչքիդ պիտի գան խրին
հոն թխմուած կաշառքներուդ հաստ սկոյրները:
Ի՞նչ պիտի ըսես: Պիտի պապանձի՞ր: Վայրկեա-
նի մը համար արիւնդ երակներուն մէջ չպիտի՞
պղպղայ սրպէս զի պոռաս, ոռնաս հող այն ա-
նիրաւութիւնը (՛.՛) որուն զոհ կ'երթաս, վազես
խոյանաս դատասրներուդ վրայ՝ անոնց կոկոր-
դէն դուրս քաշել հանելու համար կաշառքի դեռ
իւղոտ, դեռ շատ թարմ ու ծուծով լեցուն ոս-
կորները, արդարութեան այդ անկարելի ներկա-
յացուցիչներուն դլխուն վրայ փշրելու համար զա-
նոնք տեղնուտեղը:

Հաւատա՛, Թե՛վֆիք էֆէ՛տի, քու պարագադ-
ցաւալի չէ՛ միայն, սարսափելի կերպով քոմիկ ալ
է: Վասն զի ես չեմ՝ կրնար երեակայել աւելի
զաւելտական բան մը քան մարդ մը - Տաճիկ մը-
որ ուրիշ Տաճիկներու կողմէ ձերբակալուի և ար-
դարութեան յանձնուի այն յանցանքին համար
իսկ, որ առաքինութեան մը չափ յարգ կը վա-
յելէ Սուլթան Համիտի երջանկաւէտ երկրին
մէջ: Բայց այն միջոցին որ օձիքէդ բռնած կը
տանէին, փողոցին մէջ չհանդիպեցա՞ր Տաճիկ-
ներու որ հրապարակաւ Հայ մը կը փողոտէին ու

անոր գրամները շորթելով կը մեկնէին... հան-
դարտօրէն: Դուն, գոնէ մա՛րդ չսպաննեցիր:

Բանտից մէջ, այս բաներուն վրայ խորհէ՛
պահ մը, ս՛վ թէ՛վֆիք էֆէնտի: Առաջին Տաճի-
կը եղիր որ այս բաներուն վրայ խորհի՛ վերջա-
պէս: Գործածդ ոճիր էր, այո՛, ոճիր մը որ ընդ-
հանրական է սակայն քու երկրից մէջ և որուն
մասնակից են վեհապետէդ սկսեալ մինչև յետին
չէօֆճի Մէմիշը: Աշխարհի առջև ահա ոճիրդ
քաւելու զմայլելի ու դիւցազնական առիթը կը
ներկայանայ քեզի. օգտուէ՛ այդ առիթէն:

Թո՛ղ պատմութեան մէջ անցնի անունդ:
Սարսափի սարսուռ մը պատուար արունբերան
Սուլթանից ոսկորներուն մէջ: Պոռա՛, ազազակէ՛
օսմանեան դատարանին՝ մէջ թէ դուն ամէնէն
անմեղն ես այն ոճրագործներուն, որոնք այդ
երկիրը դժօրքի մը վերածած են. ճշմարտու-
թիւնը՝ թո՛ղ մէկ անգամի համար թնդայ, որո-
տայ թրքական անիրութեան քստմնելի մեհեա-
նին մէջ՝ թուրքի մը բերնով, թուր ոճրագործի
մը ազազակովը: Ի՛նչ կըլլայ, հերոսացած Տաճիկ
մը թող գտնուի վերջապէս ապակոնութեան այն
զաղիր շաղախին մէջ որ թուրք տարրն է: Թո՛ղ
ձեճեն, թո՛ղ խոշտանգեն, թո՛ղ կախեն քեզի.
հոգ չէ. վաստկելիք փառքդ լիովին պիտի փա-
խարինէ աննախընթաց յանդգնութիւն , գոր ա-
րար աշխարհի պիտի պարզէ Տաճիկն մէկը, որ

դո՛ւն պիտի ըլլաս :

Պոռա՛, պոռա՛ դատարանին մէջ, ունկնդիր հաւատակիցներուդ դարձած, դատաւորներդ մասնանշելով :

Հայրենակիցնե՛ր, սա մարդիկը որ զիս դա-
տելու կը յանդգնին, ինէ շա՛տ աւելի մեծ աւազակ-
ներ են, բայց անպատիժ կը մնան. մեր վալին,
որ այս երկիրը կառավարելու կոչուած է, կը
չորթէ, կը կողոպտէ, կը մեռցունէ շարունակ,
ամէնուն աչքին առջև, բայց անպատիժ կը մնայ.
Սուլթանը որ մեր երկրին վեհապետն է, երե-
սուն տարիէ ի վեր անգաղար կը կործանէ թուր-
քիան, կը ջարդէ իր հպատակները, աւեր աւե-
րակ կը սփռէ ամէն կողմ, բայց անպատիժ կը
մնայ. Հայրենակիցնե՛ր, գիշեր ցորեկ կարկուտի
պէս մեր երկրին վրայ տեղացող ոճիրներուն մէջ
ի՞նչ էր որ պատժուելու արժանի դատուեցաւ :
Շարժեցէ՛ք, իսլամնե՛ր, սաքի ելէ՛ք, ջախջախե-
ցէ՛ք բռնակալութիւնը և անոր անհատնում ո՛-
ճիրները...» և այլն :

Ըրէ՛ այս հովերական ժեստը, ո՞վ թէվֆիք
էֆէնտի, ճամբայ մը բա՛ց, գուցէ հետեւողներ
ուսննաս քեզի, և անունդ՝ ապագային օրհնու-
թեամբ և յուզմամբ թրթռայ հայրենակիցներուդ
չրթներուն վրայ :

Ո՞րը նախադասելի է. այս փա՞ռքը թէ այն
վիճակը որուն պիտի իջնաս նորէն վաղը երբ՝

կաշառքի մը շնորհիւ պրծելէ յետոյ վերահաս
բանտէն՝ սկսիս մարդկային խեղճ արարածներ
կողոպտել նորէն:

Մտածէ՛, մտածէ՛, Թէվֆիք էֆէնտի, փառ-
քը թեւատարած քեզ կ'ողջունէ. գիցիր անոր
.յարգը, ու անմահ պիտի մնաս:

ԵՐՈՒԽԱՆ

ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՅԻՆ

Աչքէ անցուցինք, դժբախտաբար, Ամերիկա-
յէն եկող «Ձայն Հայրենեաց»ի վերջին թիւը (ո՛վ
ձայն Հայրենեաց Մասիսի գազաթէն մեզի գա-
լու տեղ՝ Ամերիկայէն պիտի գա՞ս եղեր): Արդ,
Ձայն Հայրենեաց, նոր տարիի առթիւ, նուէր մը
տալ որոշեր է իր բաժանորդներուն և այդ նուէ-
րըն է Խրիմեան Հայրիկին վերջին պատկերը,
մեծցուած: Եւ Ձայն Հայրենեաց կ'աւելցնէ թէ
այդ պատկերը «Ամէն հայ ընտանիքի սենեակին
մէջ կախուելու է»:

Ընդհանրապէս անձի մը պատկերը կը կա-
խեն երբ այդ անձին դէմ թշնամական կամ նա-
խատական ցոյց մը ընել ուզեն, արդ, չենք կար-
ծեր որ հայ ընտանիք մը գտնուի որ այդ տեսակ
անարդանք մը ընել ուզէ մեր սիրեցեալ Հայրի-
կին՝ որուն պատկերը պէտք է գուրգուրանքով

զետեղուի, իբրև զարդ մը, ամէն հայ ընտանիքի սրահին մէջ:

Ամերիկահայ թերթը պարզապէս կը թշնամանէ իր բաժանորդները երբ կը կարծէ թէ անոնք կարող կամ տրամադիր են ՎԼՏ. Հայրիկին պատկերը կախելու:

Դո՛հ ըլլանք սակայն որ զայն կախելու խորհուրդ տալէ ետքը, այրել ալ չխրատեր:

Նոյն թերթին մէջ «Տրմղում» մթին խորագրին տակ սա երեք տողերը կը կարդանք.

«Փրէզիճի վարդապետ սխալակոչեալ Սահակ Նազարէթեանի միամիտ հայ օրիորդ մը խորբալերելու հրէշափորձին առթիւ կը գրէինք:»

Մենք իբրև բազմամեայ խմբագիր և տրուպ ծառայ հայ գրականութեան, այս տողերէն անորոշապէս բաներ մը հասկնալու կարող եղանք, բայց մենք, բարեբախտաբար, պատահական ընթերցողներ ենք միայն, ու կը մտածենք այն խեղճ միամիտ Ամերիկահայ բանուորներուն որոնք գործարաններու տաժանակիր աշխատութենէն օգեսպառ ըլլալէ ետքը, ամէն շաբաթ ստիպուած են հեգելով «քակել» այդ տողերը, յուսատու խապրիկ մը առնելու համար հայրիենիքէն:

Նոյն թերթի նոյն թիւէն կը քաղենք նաև հետեեալը, Մասաչուսէթի Լին քաղքէն գրուած նամակէ մը:

«Բաղութիս Հայերէն պ. Գէորդ Սարնէցեա-

նի հիւանդութեան ի նպաստ սարքուած վիճակահանութիւնը քաջուեցաւ նոյ. 10ին, մօտ 25 անձերու ներկայութեան»:

Հիւանդութեան մը «ի նպաստ» վիճակահանութիւն... բայց ուրեմն այդ Գէորգ Սարնէցեանը Լինի հայ գաղութին ամենէն փաստակար ու ատեցեալ մէկ անդամն է որ այդտեղի Հայերը յատուկ Յանձնախումբ մը կը սարքեն կոր «ի նպաստ» վիճակահանութեամբ մը քաջալերելու համար իր հիւանդութիւնը:

Ո՛վ Տէր Զօրաց, փրկէ՛ սա Հայաստանը, որ պէտքի գտնէ փրկուիւնք հայ Յեղափոխական թերթերու ձեռքէն:

Ա. Տ. Ե. Փ. Մ. Ի ԽՆԴԻՐԸ

Այրուբենական խնդիր մը չէ այս ինչպէս գուցէ հարևանցի դատաստան ընողները կարծեն, այլ պարզապէս Ալեքսանդրիոյ Տիգրան Երկաթ Ժողովրդային Միութեան խնդիրը:

Ինչպէս յայտնի է կարգ մը առաւել կամ նուազ գիտակցարար գործուած թիւրիմացութիւններէ ետքը, որոնք մազ մնաց Միաբանութեան հրեշտակը Հակառակութեանց խորխորատը պիտի գլտորէին, կարելի եղաւ համաձայնութիւն մը յառաջ բերել այն երեք տարրներուն մէջ որոնք կը կազմեն ժամանակակից եգիպտահայ երիտասարդութիւնը և որոնք Փղշապիներուն ծանօթ են Զէզօք, Դաշնակցական և Վեր. Հնչակեան անուններով:

-Ամէն բան կարգադրուեցաւ, միայն թէ հիմակ
դրամ պէտք է:

Ահա՛ այն կէս պաշտօնական յայտարարութիւնը
զոր ըրաւ Միութեան նորակազմ և եօթնապլուխ վար-
չութիւնը:

Եւ դրամը սկսած էր հաւաքուիլ, երբ ահա՛ անա-
կնկալ խնդիր մը, յանձնարարեալ նամակի կերպարան-
քովը ծպտուած, ներկայացաւ վարչութեան:

Խմբատեղիին կալուածատէրը կ'իմացնէր թէ գեկ-
տեմբեր 5 էն ի վեր ջնջուած էր Միութեան հետ եղած
պայմանագրութիւնը և թէ հարկ էր անմիջապէս թո-
ղուլ այն սրահներն ու սենեակները որոնք տարիներէ
ի վեր Տ. Ե. Փ. Միութեան ծառայած էին:

Հիմակ վարչութիւնը պիտի յաջող՞ տանտէրը
համոզել որպէս զի զիրենք դուրս չնետէ - *That is the
question.*

Ինչպէս կ'ըսէր հանգուցեալ Վիքթորիա թագու-
հին, ամէն անգամ որ դժուարին կացութեան մը զի-
մաց կը գտնուէր:

Եւ եթէ չյաջողի, պիտի կրնա՞յ ուրիշ յարմար
վայր մը գտնել:

-Ահաւասիկ երկրորդ խնդիրը, ինչպէս ըսաւ նո-
րակազմ վարչութեան եօթը գլուխներէն մին:

Եւ յետոյ ո՛չ մին յաջողի և ո՛չ միւսը, ի՞նչ պիտի
ընէ այն ատեն:

-Ահաւասիկ երրորդ խնդիրը...

Հետեւելով ուրիշներուն սպասե՞նք Պօղոս փայշափ
դալստեան:

Ըստ մեզ լաւագոյն միջոցն է. և ամէնէն զիւրիներ:

ԺԱՄԱՆՈՒՄ

Ուրախութեամբ կը ծանուցանենք որ երկարատև բացակայութենէ մը վերջ, քաղաքս վերագարծած է մեր սիրելի բարեկալը Արտաշէս Ճիզմէճեան, նախկին խմբագիր «Էճիրըն Կազէթ»ի, և աշխատակից «Նոր Օր»ի, «Արշալոյս»ի և «Փարոս»ի:

Բարի գալուստ կը մաղթենք մնր բարեկամին:

ՊԱՐՏԱՃԱՆԱՉ ՀԱՅ ՄԸ

Վերին եգիպտոսի Ասուան քաղքին մէջ բնակող պատուարժան ազգային մը, Տ. Գ. Մարտիկեան, որ երկար տարիներէ ի վեր հոն հաստատուած է և իր պարկեշտութեամբն ու գործունէութեամբը յաջողած է զիրք մը շինել իրեն և առ ինքն գրաւել թէ իր հայրենակիցներու և թէ բնիկ կամ օտարացիներու յարգն ու համակրանքը, թուականէս վեց ամիսի չափ առաջ, քառթ րօսթալով մը, մենէ ինդրած էր որ Ազատ Խօսքի բաժանորդ ընենք զինքը Ա. թիւէն սկսեալ:

Բնականաբար անմիջապէս բաւարարութիւն տըւինք իր ինդրանքին:

Որչնփ մեծ եղաւ մեր զարմանքն և, -ինչո՞ւ չըսենք բո՛ւն բառը,- հիացումը երբ անցած առտու փոսթայի վարչութենէն ստացած զեկոյցի մը վրայ զիմեցինք թղթատուն ուր մեզ յանձնեցին Տ. Գ. Մարտիկեանի կողմէ 40 դրչ. ողջ, փոխարժէք 40 թիւ Ազատ Խօսքի:

Եւ մտածեցէք թէ մինչև այսօր բերանացի կամ գրաւոր ո և է զիմում չէինք ըրած յիշեալ պարտաճանաչ անձին, յիշեցնելու համար մեզի հետ ունեցած հաշիւը:

Արդեօք հայ խմբագիրներու համար աւագ պարտականութիւն մը չէ հանդանակութիւն մը կատարել

իրենց մէջ, նոր տարիի առթիւ գնդեղիկ նուէրով մը վարձատրելու համար այդ կատարեալ և անստղիւտ բաժանորդները որ ո'չ միայն հայ ցեղին՝ այլ բովանդակ մարդկութեան պատիւ կը բերէ:

Մենք յօժարակամ կը տրամադրենք այս նպատակին համար հարիւր զրչ. ողջ:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Վերի իրողութիւնը ներկայացնելով մեր կարգ մը բաժանորդներուն, մանաւանդ Գահիրեցի, խորին ուշադրութեան, կը յուսանք թէ լաւագոյն դասը տուած կ'ըլլանք իրենց:

Այն պարագային որ այս դասէն ալ չօգտուին և շարունակեն անբացատրելի յամառութեամբ մը չլճարել իրենց բաժնեգիւնները, այն ատեն, ցաօք արտի պիտի պարտաւորուինք իրենց անունները և մակաՆունները 16 բունթօ երկաթագիր տառերով արձանագրել մեր էջերուն մէջ, որպէս զի ապագայ սերունդը գիտնայ թէ քսաներորդ դարուն սկիզբը գտնուած են Հայեր՝ որոնք, մարդակերներէ աւելի վայրագ՝ չեն խղճած թերթերու բաժնեգիւնն իսկ ուտելու:

Ա. Զ. Դ

Աթթարին փողոցը թիւ 39 խանութին մէջ կը վաճառուին հետեւեալ ապրանքները, ամենաընտիր տեսակէն և գոհացուցիչ գիներով:

Ձէյթին եաղ, սապոն, ճերմակ պանիր, Կովկասի հռչակաւոր սև իրավեարը ինչպէս նաև Կովկասեան և հայկական Իշխան և Շամայի ձուկերը, նոյնպէս Եէմէնի խահուէ և այլ նպարհիղէնք:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հինց տարւան փորձառութենէ յետոյ, կու-
գամ յայտարարել յորդոյ հասարակութեան, թէ
թէ պատրաստ եմ կատարել շուտով և խնամքով,
մաքսի վերաբերեալ ամէն տեսակ դորձողու-
թիւններ, ներածութիւն և արտածութիւն, ինչ-
պէս նոսե վաճառականական յանձնակատարու-
թիւններ:

Հասցէ՝ Տիրան Յովհաննէսեան

Օրէլ Մօնֆէրաթօ, Աղերսանդրիա

ՄԵԹ ԱՇՄՍԱՆՈՅ

ՌՈՒԳՐԱՎԱՆ ԵՒ ՏՐԱԳՐԱՎԱՆ ԱՇՄՍԱՆՔԵՐԱՆՑ

Դ. ԿԱԶՄԻՔԻՅԱՆ

ՀԱՅՍՏԱՆ

Գրաստան, Մարտի 1907, Կոստանթնուպօ, Ե. Ա. Ե. Ա.

15 RUE STAMBOUL 15

ALEXANDRIE

Այս աշխատանքին ձեռք կը դրաստանին զոր
զանձ և կը կըլ շուրջ իշխանի, Քառշուռ, Յիւնի,
Գրգուտ երկրներ, արձաթ և ուրիշ մետերաներ,
Քաճիկներ և. Զինեթրաքի և Կալիստրոյաթի
Վերաբերեալ գործեր:

Տարածական ամեն տեսակ գործեր ևայ թ ասոր
Պարտիքի, Հարսանկաւ նրախաղիքներ, այցա-
նարաներ, Յամակաղիքներ, ասացալիքներ, Եստն
արտաներ, Տնտեսողներ, Եւրոպայի արտադրաներ, զիջեց ին
Մասնաւոր թիւանք Եւրոպի և մարտիքեան ըստ
Վարդ զի:

Այս աշխատանքը կը թրմուի և կը թրմուի
Աղերսանդրիոյ, Քառշուռ, Եւրոպայի արտադրանք
կը կըլ, Կառնիկով թէ Եւրոպայի արտադրանք
արտադրանք ամենամեծ ինքնուրոյ կը կատար-
ուին և զո՛ր կը կըլ ամեն գնատարած Եւրո-
պայի:

Ստոր գրաստաններու զինքն ասոյ ճանաչող
անգամ զո՛ր աշխուշ այն աշխատանքը:

«ԱԶՍՏ ԽՕՄԲ» ՁԵՌԻՔԻ


ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ

Աղերսանդրիա՝ Տ. Յ.

Հազդիկանի քով և Շէրիֆ
Փաշա լրագրավաճառ Տ.
Թեղլալեանի խանութը:

Գահիրէ՝ լրագրավաճառ
Տ. Հունկի և Կօլտըն Բէտոյ-
քի քով և «Լուսարեք»
թերթի ցրուիչին մօտ:

Նախորդ շաբթուան
թիւերը կը վաճառուին
կրկին գինով:



“ԱՋՆՆ ԽՕՒԲ”-ի Դաշնակները

ԱՋՆՆ ԽՕՒԲ - ԿԵ ՉՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՄԱԾ ՕՐԵՐԵ

Եղկյոտոսի համար բամճկիցէ է

| | |
|---------|------------|
| 40 ՔԻՐԵ | 40 ՂՐԵ ՈՂՋ |
| 20 ” | 20 ” ” |

ԱՐՏԱՍԱՀԻՐԱՆ

| | | |
|---------|--------|-----------|
| ԵՒՐՈՍՍ | 40 ՔԻՐ | 10 ՏՐԱՂԲ |
| ՈՒՌՈՒՄ | ” ” | 4 ՐԱՌՈՒԼԻ |
| ԱՍԵՐԻԿԵ | ” ” | 2 ՏՈՒՍԻ |

Քաճանեղոցացիները կանխիկ

ՀԱՏԵ 1 ՂՐԵ ՈՂՋ

“ԱՋՆՆ ԽՕՒԲ”-ի համար բամճկիցին կամ
որ և է գրութիւն պէտք է ուղղել Տե-
տեւեայ հասցէին՝

Կ. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE. (EGYPTE)

Մանուգրովներ կրկնաւարձե ճանճաւոր
պայտմաներով:

Դպրատանստաւ. Խճապի. Կ. ՏԵՆԵՆԻ.

Տպութեան Կ. ՏԵՆԵՆԻԿԵՆԵ Ալեքսանդրիոյ